Ազդարարության Trumpet's Sound փող

51-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2020

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արդյոք մինչև վերջ լցվա՞ծ եք ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Ինչպես դարձի եկա ..... Անի Սահակյան

Սաղմոս 6. ..... Դոն Սթորմըր

Ազատարար ձեռքը ..... Քաղված

Գոհությո՛ւն տվեք. ..... Վեր. Հապիպ Ալաճաճի

Հովհաննեսի հայտնությունը և յոթ նամակները (3) ..... QMBC պանորամա

Ապաշխարություն ..... Նեյլ Բուքման

Մեղքի մեջ բռնված ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Փորձությունները մեր կյանքում. ..... Ռեքս Տիրլավ

Բարի անունը ..... Քաղված

Մեղա Քեզ, Տե՛ր. ..... Հովիվ՝ Գառնիկ Աբրեյան

Արդյոք մինչև վերջ լցվա՞ծ եք

Ս իդնեյում 2000 թ.-ի Օլիմպիական խաղերի բացման արարողության ընթացքում աշխարհը հետևում էր Օլիմպիական կրակին, սակայն պատմական այդ պահը մոտ էր նվաստացուցիչ ձախողություն դառնալուն: Սուրբ կրակը, որը բերված էր Հունաստանի Օլիմպիայից, շուտով հանգչելու էր, մինչդեռ ավելի քան երկու միլիարդ մարդ հետևում էին այդ իրադարձությանը:

Արարողության նախօրեին գաղտնի փորձեր էին արվում՝ համոզվելու համար, որ ներկայացումն առանց խոչընդոտի է ընթանալու:

Ավագ ղեկավարներից մեկն ասաց.

- Գազի շշերը պետք է մինչև բերան լիցքավորեք:

Գազի համար պատասխանատու տղաներն ասացին.

- Օ՜հ, մեկ տոննա գազ կա:

Բայց ղեկավարն ասաց.

- Մինչև վերջ լցրե՛ք, ռիսկի մի՛ դիմեք, մինչև բերա՛ն լցրեք:

Բացման արարողության հաջորդ օրը գազի շշերի ստուգումը ջրի երես հանեց կազմակերպիչների անփութությունը: Նրանք միջազգային խայտառակության առարկա դարձան: Շշերը ամբողջովին դատարկ էին:

Մատթ. 25:1-13-ը խոսում է հինգ կույսերի մասին, որոնց յուղը վերջացավ: Հարցս հետևյալն է. «Ինչպե՞ս է ձեր հոգևոր կյանքը: Արդյոք քի՞չ է մնացել, որ դատարկ անոթ դառնաք, թե՞ մինչև վերջ լցված եք»:

Համաճարակով պայմանավորված նոր կենսաձևը կարող է մեզ անակնկալներ մատուցել՝ վախ, անորոշություն, գործազրկություն, դատարկություն: Արդյոք հինգ կույսերի պես հոգևորապես քնելո՞ւ ենք ու անպատրաստ ենք լինելու Տիրոջը դիմավորելու համար:

Աստծո Խոսքը քաջալերում է մեզ.

«Արթո՛ւն մնացեք, հսկեցե՛ք, որովհետև ձեր հակառակորդը՝ սատանան, մռնչացող առյուծի պես պտտվում ու փնտրում է՝ թե ո՛ւմ կուլ տա» (Ա Պետ. 5:8):

«Զգո՛ւյշ եղեք, արթո՛ւն մնացեք և աղոթեցե՛ք, որովհետև չգիտեք, թե ե՞րբ է ժամանակը» (Մարկ. 13:33):

«Ուստի ձեր մտքերը գոտեպնդեցե՛ք, զգա՛ստ եղեք և ձեր հույսն ամբողջապես դրեք այն շնորհի վրա, որ ձեզ է հասնում Հիսուս Քրիստոսի հայտնությամբ» (Ա Պետ. 1:13):

Արդյոք մինչև վերջ լցվա՞ծ եք:

Մենք պետք է զգոն լինենք աղոթքի, Խոսքը կարդալու, խորհրդածելու, մեր միտքը չարից հեռու պահելու, միմյանց համար աղոթելու և իրար քաջալերելու մեջ, քանի որ շատ շուտով Թագավորին ենք տեսնելու:

Միայն քո փրկությամբ մի՛ բավարարվիր: Քո շրջապատում շատերը կան, ովքեր Ավետարանի կարիքն ունեն: Վե՛ր կաց և ջանասե՛ր եղիր Տիրոջը ծառայելու մեջ, Ավետարանի բարի լուրը տարածի՛ր:

Հ. Գ.

Ինչպես դարձի եկա

Ես ծնվել եմ մի վայրում, որտեղ բացարձակ հոգևոր խավար էր տիրում: Ես էլ, բոլորի պես չգիտակցելով, զբաղված էի կռապաշտությամբ. պաշտում ու երկրպագում էի անշունչ ու անկենդան իրերին՝ սրբապատկերներին, խաչքարերին, քարաշեն կառույցներին, ինչպես նաև այսպես կոչված «սուրբ ծառին»: Ամեն անգամ այդ ծառի մոտով անցնելիս համբուրում էի այն: Իսկ փոքր տարիքում, երբ հասակս չէր հասնում, խնդրում էի, որ ինձ գրկեն, որպեսզի ես էլ անպայման համբուրեմ: Զավեշտալի է, բայց նաև շա՜տ ցավալի:

Ես էլ բոլորի պես նորմալ էի ընդունում գուշակությամբ զբաղվելը,

բախտ բացելը, սուրճի բաժակ նայելը, մոմ թափելը և այդպիսի շատ այլ մոգական բաներ: Բայց դրանք չէին բավարարում իմ հոգևոր պահանջները, և ինչ-որ մի բան միշտ պակաս էր իմ կյանքում:

Տարիներն անցնում էին, սակայն հոգևոր փնտրտուքս չէր դադարում: Երազում էի, որ գոնե մեկը լիներ, ով ինձ կպատմեր իրական Աստծո մասին: Ո՛չ իմ ընտանիքը, ո՛չ էլ հարազատներս երբևէ չեն պատմել ինձ Աստծո մասին, քանի որ այդ խեղճերն իրենք էլ չէին ճանաչում Նրան:

Նոր Կտակարան առաջին անգամ դպրոցում են բաժանել մեզ, սակայն, ցավոք սրտի, չկար մեկը, որ ճիշտ ուղով առաջնորդեր մեզ:

Մի անգամ, երբ Գիրքը ձեռքս վերցրի և մի քանի տող ընթերցեցի, հասկացա, որ սա իմ խելքի բանը չէ. ինձ համար շատ բարդ էր հասկանալը, սակայն չհանձնվեցի և շարունակեցի կարդալ: Դրանից հետո սկսեցի տրտմել, որովհետև հասկանում էի, որ այս Գրքի գրվածքով չեմ կարող ապրել. կարծում էի՝ իմ գործերով պետք է փրկվեմ: Բայց եթե գործերով լիներ փրկությունը, ապա Տեր Հիսուսն աշխարհ չէր գա, չէր խաչվի և հարություն չէր առնի: Հետո հասկացա, որ մեղավորի փրկությունը միայն հավատքով է. եթե լսես Նրա Խոսքը, հավատաս լսածներիդ և ՔՐԻՍՏՈՍԻՆ կյանքիդ Տերը դավանես, ապա կփրկվես դժոխքում լինելու հավիտենական դատապարտությունից: Սրտաբուխ ու անշահախնդիր կերպով արված բարի գործերը պետք է երևան մարդու կյանքում նրա փրկվելուց հետո՝ որպես ապացույց այն բանի, որ տվյալ անձն իրոք փրկված է և Աստծո զավակ է:

Այնուհետև սկսվեցին հոգևոր կյանքով ապրելու իմ փորձերը: Ես մտքով հավատում էի, բայց սիրտս չէր փոխվում, որովհետև մտածում էի, թե կարող եմ և՛ աշխարհը վայելել, և՛ հոգևոր կյանքով ապրել, ինչպես այսօր շատ մարմնավոր և վերստին չծնված հավատացյալներ են անում: Երբ փորձեցի լրջորեն մոտենալ Աստծուն, իմ կյանքում բազում փորձություններ սկսվեցին, որովհետև չարի ձեռքից գնում էի, և դա նրա սրտով չէր: Բայց փա՜ռք իմ Տիրոջը այդ բոլոր դժվարին օրերի համար: Եթե դրանք չլինեին իմ կյանքում, գուցե չխոնարհվեի և Տիրոջն էլ չդառնայի...

Աստծո Խոսքում գրված է, որ «բազում նեղություններ կրելով կմտնենք Երկնքի Արքայությունը»: Քրիստոնյայի իրական ու հավիտենական կյանքն այնտեղ է շարունակվելու, և այստեղ ապրած ամենալավ կյանքը ոչինչ է գալիք փառքի համեմատ:

Երևի թե տասը տարուց ավելի տևեց Աստծուն փնտրելս: Բայց փառք Աստծո, որ ի վերջո իմ կյանքում հայտնվեցին մարդիկ, ովքեր ինձ իրապես ցույց տվեցին փրկության ճշմարիտ ուղին: Եվ այսօր ի լուր աշխարհի կարող եմ հայտնել, որ կյանքս ամբողջովին հանձնել եմ Քրիստոսին:

Վերջապես հասկացա, թե ինչո՞ւ եմ աշխարհ եկել, ո՞ւր եմ գնում և ո՞րն է կյանքիս նպատակը: Ես մի մե՜ծ գանձ եմ գտել, որ աշխարհի ոչ մի գանձի հետ չեմ փոխի: Կյանքս վերջապես իմաստ ստացավ, բարեփոխվեց, երբ Տիրոջ Հոգին իմ մեջ բնակվեց, և ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Հներն անցան և ահա ամեն բան նոր եղավ». ես ամբողջովին նոր մարդ դարձա: Տերն ինձ օրհնեց բազո՜ւմ օրհնություններով և սկսեց ինձ գործածել Իր փառքի և փրկության Ավետարանը տարածելու համար: Փառք Աստծո, որ այսօր իմ շատ սիրելի և հարազատ մարդկանցից ոմանք ընդունել են Քրիստոսին՝ որպես իրենց կյանքի Տեր: Հույսով եմ, որ իմ հարազատներից ու ծանոթներից շատերը դեռ կփրկվեն: Սա մի փոքր ու համառոտ վկայություն էր իմ կյանքից:

Սիրելի՛ բարեկամներ, հարազատներ, լսե՛ք և հավատացե՛ք Աստծո Խոսքին, ճաշակե՛ք ու տեսե՛ք, թե որքա՜ն քաղցր է Տերը... Այս ամենը հորինվածք չէ, ոչ էլ հեքիաթ, այլ բոլորովին իրական ու լուրջ է: Իմ պարծանքը միայն Քրիստոսն է: Փա՜ռք Աստծուն:

Ինձ համար մեծ պատիվ է այսուհետ և հավիտյան ամենակարող Աստծո զավակ կոչվելը:

Քրիստոսի սիրով՝

Անի Սահակյան

❊ ❊ ❊

Սաղմոս 6

(Կարդացե՛ք 6-րդ սաղմոսը)

Ինչ-որ պատճառով վաղ եկեղեցին 6-րդ, 32-րդ, 38-րդ, 51-րդ, 102-րդ, 130-րդ և 143-րդ սաղմոսները անվանել է «զղջման սաղմոսներ»: Այնուամենայնիվ, այս սաղմոսներից առաջինը մեղքի խոստովանություն կամ ներման աղոթք չի պարունակում: Սա իսկապես այն մարդու աղոթքն է, ով գիտակցում է իր տկարությունն ու սահմանափակումները և փրկության համար Տիրոջն է դիմում: Տերը պարգևատրելու է նրան՝ լսելով ու պատասխանելով նրա աղոթքին:

Սաղմոսի առաջին մասը (1-7 համարները) աղոթք է բժշկության ու փրկության համար, իսկ երկրորդ մասը (8-10 համարներ) արտահայտում է Դավթի վստահությունը, որ Աստված պատասխանելու է իր աղոթքին:

Սաղմոսը սկսվում է խնդրանքով, որ Տերն Իր սրտմտությամբ չհանդիմանի ու Իր բարկությամբ չխրատի իրեն: Դավիթը գիտակցում էր, որ եթե Աստված իրականացնի Իր դատաստանը, ապա ոչ մի խնդրանք չի կարող մեղմացնել իր արժանի պատիժը, ուստի դիմում է Տիրոջ ողորմությանը: Նա խնդրում է Տիրոջ բժշկությունը:

Մենք չգիտենք, թե սաղմոսերգիչն ինչպիսի խնդիրներ ուներ: Նախորդ սաղմոսում Նա մտահոգված էր իրեն շրջապատող չար մարդկանց անօրենություններով: 8-րդ համարից կարող ենք հասկանալ, որ Նա անհանգստացած էր անօրենություն գործողների պատճառով, սակայն այս սաղմոսում նման շեշտադրության չենք հանդիպում:

Շատ առումներով լավ է սաղմոսերգչի խնդիրների մասին անտեղյակ լինելը, քանի որ սա մեզ հնարավորություն է տալիս ճշմարտությունը մեր հատուկ իրավիճակներում կիրառելու համար: Ինչպիսին էլ լինեն մեր հանգամանքները կամ դժվարությունները, մենք կարող ենք աղոթքով Տիրոջ առջև գալ ու փնտրել Նրա ողորմությունը:

Սաղմոսերգիչը Տիրոջն է դիմում, սակայն կարող ենք նկատել նրա հրատապության զգացումը: Նա հարցնում է, թե որքա՞ն պետք է սպասի, որ իրեն հասնի Տիրոջ օգնությունը: Մենք պետք է Տիրոջը համբերատար սպասենք. սա է Սաղմոս 37:7-ի պատգամը. «Հանգըստացի՛ր Տիրոջ մեջ ու համբերությամբ Նրա՛ն սպասիր. մի՛ խռովվիր իր ճանապարհով հաջողություն գտնողի պատճառով, խաբեությամբ գործ անող մարդու պատճառով»: Գուցե լավ հիմքեր կան, թե ինչու է Տերն ուզում, որ Իրեն սպասենք: Այդպես անելով՝ մեր վըստահությունն ու հավատքն առ Աստված ավելի կզորանա:

Սաղմոսերգիչը Տիրոջը դիմում է փրկության համար: Սա անհրաժեշտություն է այս կյանքում, քանի որ գերեզմանում Տիրոջը հիշատակել չկա: Ուստի գիտակցում ենք, որ նախքան գերեզման մտնելը այս կյանքում ոչ միայն պետք է սպասենք մեր խնդրանքների դրական պատասխանին, այլև շնորհակալություն հայտնենք Աստծուն Իր բարության համար: Արդյոք շնորհակա՞լ ենք Տիրոջը Իր անսահման սիրո համար:

Որոշ առումով կարող ենք ենթադրել սաղմոսերգչի դիմագրաված դժվարությունների ծավալը: Իր դժվարությունը հոգնեցրել էր իրեն հոգեպես և հուզականորեն: Իր թշնամիների գործունեությունը վաղաժամ ծերացրել էր նրան: Մենք պատկերում ենք խորապես վիատված մի մարդու: Նա ճիշտ վարվեց. իր բոլոր խնդիրները Տիրոջ առջև բերեց և իր սրտի ծանրությունը Նրա առջև թափեց:

Սաղմոսերգիչը գիտակցում էր, որ Տերը լսել է իր լացն ու աղաղակը: Լավ է այս ճշմարտությունը հասկանալը: Տերը լսում է մեզ, երբ Իր անունն ենք կանչում: Սաղմոսերգիչը կատարեց միակ իմաստուն քայլը. նա աղոթքով դիմեց Տիրոջը և բոլոր մանրամասնությունները Իրեն ներկայացրեց:

Ցավոք սրտի, մեր մեջ թաքնված է այն համոզմունքը, որ ունակ ենք մեր ուժերով կարգավորել սեփական խնդիրները: Նաև կարծում ենք, թե մասնագետներին դիմելով՝ կարող ենք մեզ անհրաժեշտ օգնությունն ստանալ: Իհարկե, կան պարագաներ, երբ լավ է մեր խընդիրների մասին իմաստուն քրիստոնյա խորհրդատուի հետ խոսելը, բայց նախևառաջ պետք է Տիրոջ օգնությունը փնտրենք:

Իր նորոգված ուժով սաղմոսերգիչը անօրենություն գործողներին պատվիրում է հեռանալ իրենից: Նա սովորեց Տիրոջը վստահել և իրեն հակառակվողների ճակատագիրը հանձնեց Տիրոջ ձեռքերի մեջ:

Բոլորս դժվարություններ ունենք: Եկեք չփորձենք սեփական ուժերով լուծել մեր խնդիրները: Աղոթքով Տիրոջը դիմենք, պատմենք Նրան մեր կարիքները, չնայած Նա արդեն գիտի, և փնտրենք Իր առաջնորդությունը մեր կյանքում:

Դոն Սթորմը

Ազատարար ձեռքը

30-ամյա Ջինել անունով Տրինիդադից գաղթած նշանված մի երիտասարդուհի աշխատում էր «Ուորլդ թրեյդ» կենտրոնի երկնալաց առաջին աշտարակի 64-րդ հարկում: Սեպ. 11, 2001թ.-ին նա ուրախությամբ գործի գնաց, քանի որ Միացյալ Նահանգներ եկած օրից կյանքը բոլորովին տարբեր էր իր համար: Նա թողել էր իր երկրի սովորությունները և փորձում էր նոր աշխարհում համակերպվել: Թեև քրիստոնյա էր, սակայն երբ մայրը քաղցկեղից մահացավ 1999թ.-ին, իր հավատքը խախտեց մինչև այդ ահռելի և անմոռանալի օրը, որ կրակե կնիքով փորագրվեց պատմության էջերին:

Մինչ այդ պայծառ առավոտյան Ջինելը իր գրասենյակում զրուցում էր ընկերուհու հետ, հանկարծ հզոր պայթյուն լսվեց վերևից, և ամբողջ շենքը ցնցվեց: Նախ կարծեցին, թե երկրաշարժ է, իսկ հետո իմացան, որ ահաբեկչական հարձակում է: Շատերը լեղապատառ փախան, բայց Ջինելը մի քանի մարդկանց հետ սպասեց, մինչև որ երկրորդ պայթյունը լսվեց: Այն ժամանակ բոլորը սարսափահար սկսեցին 64-րդ հարկից իջնել: Եվս մեկ անգամ խլացուցիչ ձայն ցնցեց բոլորին, և Ջինելը երեսի վրա ընկավ: Փոշի, քար, երկաթ և ապակի էր թափվում ամեն կողմից: Հետո կայծակի արագությամբ որոտի նման ահռելի ձայնը սարսափազդու, տարօրինակ լռությամբ փոխարինվեց:

Ջինելը շնչում էր, բայց չէր կարողանում շարժվել: Փորձեց վեր կենալ, սակայն անհնար էր: Ոտքերը թաղված էին հողակույտի տակ, իսկ գլուխը գամված էր երկու մեծ սյուների միջև: «Պետք է ինքս ինձ ազատեմ, հակառակ դեպքում՝ կմահանամ», - ասաց ինքնիրեն և ամբողջ ուժով վիզը քաշեց: Մազերը պոկվեցին, և արյուն սկսեց հոսել ճակատից, բայց գոնե գլուխը կարողանում էր շարժել: Մթության մեջ, ապակիների և քարերի տակ բանտարկված, սկսեց մտածել, թե արդյոք դուրսում ի՞նչ է կատարվում: Շատ անհույս էր վիճակը: Հանկարծ հիշեց սիրելի մայրիկին և մտածեց, թե ի՞նչ կաներ նա այսպիսի պարագայում: Կաղոթեր: Ոչ թե ամեն բան փորձելուց հետո, այլ սկզբից: Ուստի աչքերը փակեց և այսպես աղոթեց. «Տե՛ր, գիտեմ, որ Դու գոյություն ունես: Թեև միշտ Քեզ չեմ վստահել, երբեմն էլ Քեզ անտեսել եմ, բայց հիմա խնդրում եմ, որ օգնես ինձ»:

Երբ աչքերը բացեց, տեսավ լույսի բարակ նշույլ, որ փայլում էր իրեն շրջապատող փլատակներից: Մտածեց՝ ցերեկ է, սակայն ոչ մի ձայն չէր լսվում: Կամաց-կամաց լույսի շողը մարեց: «Տե՛ր, կողքս մնա»-, խնդրեց ու շարունակեց խոսել Աստծո հետ, մինչև որ քնեց: Երբ արթնացավ, լույսի շողը նրան դիմավորեց: Ջինելը իմացավ, որ նոր օր է սկսվել: «Տե՛ր, առանց հրաշքի անկարելի է, որ այստեղից ազատվեմ: Բայց Քեզ գտա, և դա մեծագույն հրաշքն է ինձ համար: Քո կամքը թող լինի», - ասաց վստահությամբ: Այդ վայրկյանին ձայն լսեց վերևից:

- Հե՜ղո, - բացականչեց խռպոտ ձայնով: - Մեկը կա՞ ներքևում, - հարցրեց վերջում:

- Այո՛, բայց ոտքերս բռնված են, չեմ կարող շարժվել, - պատասխանեց երիտասարդ աղջիկը:

Ապա ուրիշ ձայներ լսվեցին: Ջինելը ձեռքը մեկնեց դեպի այդ լույսը, որ շողում էր ճեղքից: Մի զորեղ ձեռք բռնեց նրա տկար մատները:

- Մի՛ վախեցիր, - ասաց ձայնը վերևից: Անունս Փոլ է: Համբերի՛ր, քեզ այստեղից դուրս կհանեն:

Փոլը շարունակեց խոսել Ջինելի հետ, մինչ փրկարարները փորձում էին փլատակները մի կողմ դնել: Ամեն անգամ, հենց որ խեղճ աղջիկը սրդողում էր, Փոլը նրա ձեռքը ամուր սեղմում էր, և Ջինելի սիրտը խաղաղությամբ էր լցվում: Քիչ հետո դժվարությամբ ազատեցին Ջինելին հսկայական քարակույտերի տակից, որում թաղված էր 27 ժամ: Ջինելը վերջին անձն էր, որ ողջ գտնվեց այս վիթխարի փլատակների տակից:

Շաբաթներ շարունակ նա հիվանդանոցում մնաց, քույրերը և նշանածը միշտ իր կողքին էին: Մեկ բան հստակ էր մտքում, թե երբ նեղության ժամանակ Տիրոջը կանչեց, Նա պատասխանեց իրեն նախ՝ Իր լույսի ներկայությամբ, ապա՝ Փոլի միջոցով:

Ջինելի գործակիցներից շատերը մահացան այդ օրը: Նա երախտագիտությամբ ասաց. «Ուրիշ հազարավորների կողքին ես էլ մեռած կարող էի լինել, սակայն Փոլը ազատեց ինձ»: Նա ուզեց անձամբ շնորհակալություն հայտնել իր ազատարարին: Երբ իրեն ազատագրող խումբը հիվանդանոց եկավ՝ այցելության, հարցրեց, թե ուր է Փոլը: Մարդիկ իրար նայեցին և ասացին, որ Փոլ անունով մարդ չկար իրենց հետ:

Ջինելը զարմացավ և սկսեց մտածել, թե արդյոք երա՞զ էր տեսածը: Սակայն ո՛չ: Նա ստույգ գիտեր, որ երազ չէր, քանի որ Փոլի ձեռքի ուժեղ սեղմումը զգացել էր: Նա հասկացավ, որ դա Աստծո հպումն է եղել: Սեպտեմբերի 11-ից ի վեր այդ ձեռքը նրան երբեք չի թողել:

«Տերը բարի է Իրեն հուսացողների նկատմամբ, այն անձի, որ Իրեն է որոնում: Լավ է հուսալ և լռությամբ սպասել ՏԻՐՈՋ փրկությանը» (Ողբ Երեմիա 3:25-26):

Քաղված «Օրհնաբեր նռնենին» գրքից

❊ ❊ ❊

Գոհությո՛ւն տվեք

«Ամեն ինչում գոհությո՛ւն մատուցեք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար Քրիստոս Հիսուսով» (Ա Թես. 5:18):

Շնորհակալություն հայտնելու առաջին պայմանը գոհունակ սիրտ ունենալն է: Նա, ով դժգոհությամբ և գանգատներով լի է, ո՛չ գիտի, թե ում պետք է շնորհակալություն հայտնի, ո՛չ էլ գիտի, թե ինչու պետք է շնորհակալություն հայտնի:

Աստծո մի մարդ գոհունակ սրտով շնորհակալություն հայտնելը բացատրում է հետևյալ օրինակով: Նա ասում է՝ եթե իրեն մի ման տան՝ լի ավազով և երկաթե մանր կտորներով, ու խնդրեն այդ ավազի մեջ եղած երկաթի մանր կտորները մատներով առանձնացնել ու ավազի մեջից հանել, որքան էլ ջանա, չի հաջողվի: Սակայն եթե մագնիս ունենա ու այդ մագնիսը, ավազի մեջ պտտցնելով, ամեն կողմ շարժի, առանց որևէ դժվարության կկարողանա երկաթե բոլոր մանր կտորները մագնիսի վրա հավաքել:

Դժգոհ ու գանգատներով լի սիրտ ունեցող անձը նման է նրան, ով ավազի հատիկների մեջ մատներով փորձում է երկաթե մանր կտորներ փնտրել. անշուշտ չի կարողանա:

Գոհունակ սիրտ ունենալը նման է ավազի մեջ մագնիսով երկաթե մանր կտորներ փնտրելուն: Այսինքն՝ գոհունակ սիրտը ներքին մղիչ ուժով անդադար երախտապարտ է Աստծուն իրեն տրված բոլոր բարիքների համար: Այսպիսի անձի համար Աստծուն շնորհակալություն հայտնելը առօրյա փորձառություն է:

Ուստի թույլ չտա՛նք, որ գանգատները և տրտունջները, մեր սրտերում տեղ գրավելով, հեռացնեն մեզ Աստծուն գոհունակ սրտով փառք տալու հաճույքից:

Վեր. Հապիպ Ալաճաճի

Հովհաննեսի հայտնությունը և յոթ նամակները (3)

Թիվատիրին ուղղված նամակում Տերն ասում է. «Ասում եմ ձեզ, ինչպես նաև մյուսներին, որ Թիվատիրում են գտնվում... պահեցե՛ք այն, որ արդեն ունեք, մինչև Ես գամ» (Հայտ. 2:24-25): Մենք հավատում ենք, որ սա վերաբերում է Եկեղեցու հափշտակությանը, երբ Տերը կգա՝ Իր ճշմարիտ Եկեղեցուն հափշտակելու: Անհավատները կշարունակեն իրենց կրոնական գործունեությունը և Հռոմեական համակարգը, որն իր վերջնական դատաստանին պիտի արժանանա, ինչպես մարգարեացվել է Հայտնություն 17-րդ գլխում:

Սարդիկե նշանակում է «Ուրախության իշխան», կամ «մնացորդ», կամ «փախած»: Այս բոլոր իմաստները նկարագրում են Ռեֆորմացիայի շրջանը, երբ մեկ կողմ դրված ճշմարտությունները վերականգնվեցին ու Լյութերի և այլ բարեփոխիչների առաջնորդությամբ հազարավոր մարդիկ դուրս եկան կամ փախան Հռոմեական եկեղեցուց:

Այսպիսով՝ ծնվեց բողոքականությունը, և հնարավորություն եղավ փախչելու Հռոմեական եկեղեցու բռնակալությունից ու վերադառնալու պարզունակ քրիստոնեությանը: Սակայն ինչպես նշեցինք նախորդ սերտողությունում, առաջնորդներն այդպես չարեցին, փոխարենը նրանք պահպանեցին Հռոմեական կաթոլիկության որոշ հայեցակարգեր, և դեռևս գտնվելով քաղաքացիական իշխանության հըսկողության ներքո՝ քիչ իրավասություն ստացան եկեղեցում որպես դրա անդամ ընդունվելու հարցում: Այսպիսով՝ նորածինների մկրտությունը դեռևս ընդունվում էր որպես միջոց եկեղեցական անդամակցության և Աստծո Թագավորության մեջ մտնելու համար, թեև Լյութերը հստակ արտահայտել էր, որ «մենք արդարացված ենք հավատքով» (Հռոմ. 5:1): Ակնհայտ էր, որ Պենտեկոստեի օրը Աստծո Թագավորության մեջ մանուկներ չկային, և այսօր քրիստոնեությունն ընդունողները նրանք են, ովքեր դա անում են, երբ հասնում են գիտակցության տարիքի:

Այսպիսով կարդում ենք Սարդիկեի եկեղեցուն ուղղված Տիրոջ խոսքը. «Գիտեմ քո գործերը՝ որ անուն ունես, թե կենդանի ես, բայց մեռած ես» (Հայտ. 3:1): Նորաստեղծ բողոքական եկեղեցիների մեծամասնությունը հավանաբար ոչ ճշմարիտ քրիստոնյաներից էին կազմված: Նրանք մեռած էին իրենց անօրենությունների ու մեղքերի մեջ (Եփես. 2:1): Նրանք երբեք չէին ընդունում իրենց մեղավորությունը, ոչ էլ ապաշխարել էին կամ Ավետարանին հավատացել (Գործք 20:21):

Տերը շարունակում է դիմել եկեղեցու առաջնորդներին. «Ուստի հիշի՛ր, թե ինչպես ընդունեցիր ու լսեցիր և ամուր պահի՛ր, և ապաշխարի՛ր: Եթե արթուն չմնաս, գողի պես գալու եմ քո վրա, և բնավ չես իմանալու, թե որ ժամին եմ գալու քո վրա» (Հայտ. 3:3): Բարեփոխիչներն այժմ Աստվածաշնչի թարգմանություններ ունեն լատիներենից բացի այլ լեզուներով, և ընդհանուր առմամբ մարդիկ սկսել էին լսել Աստվածաշունչը կամ անձամբ կարդալ այն: Այնուամենայնիվ, Աստվածաշնչի մեծ ճշմարտությունների հանդեպ տարածված անտեղյակություն կար, ինչպիսիք են՝ Իսրայելի դերը մարգարեություններում, Տիրոջ գալուստը և դրա հետ կապված վերջին օրերի իրադարձությունները: Այս ճշմարտությունները պետք է վերականգնվեն տասնութերորդ և տասնիններորդ դարերում՝ Ֆիլադելֆիայի ժամանակաշրջանում:

Ֆիլադելֆիա նշանակում է «եղբայրական սեր» կամ «սեր եղբոր նկատմամբ»: Ինչպես Զմյուռնիայի եկեղեցում, այստեղ նույնպես բացասական քննադատություն, որևէ բողոք կամ դատապարտություն չկա: Ֆիլադելֆիայի եկեղեցու անդամները ակնհայտորեն կատարում էին Տեր Հիսուսի պատվիրանը՝ «սիրեցե՛ք միմյանց» (Հովհ. 13:34): Սա նշանակում է, որ նրանք սիրում էին Տեր Հիսուսին ու պահում Նրա պատվիրանները (Հայտ. 3:8, Հովհ. 14:15): Նրանք հոգևորապես առողջ եկեղեցի էին:

Ինչպես արդեն նշեցինք, տասնութերորդ և տասնիններորդ դարերի սկզբում վերականգնված ճշմարտություններից մեկը հավատացյալների համար Տիրոջ գալստյան ճշմարտությունն էր: Թեսաղոնիկեցի հավատացյալները սպասում էին Երկնքից Աստծո Որդու գալըստյանը (Ա Թես. 1:10), սակայն երկուսուկես դար անց ճշմարտու-

թյունը գործնականում մոռացվեց: Այն վերականգնվեց 18-րդ դարում, երբ մարդիկ սկսեցին հեռանալ հիմնադրված դավանանքներից ու վերադառնալ դեպի պարզ քրիստոնեություն: Մենք հավատում ենք, որ Ֆիլադելֆիայի եկեղեցին ներկայացնում է հիմնադրված դավանանքներից դուրս գալու պատկերը: Եվ Տերը տալիս է նրանց թանկարժեք խոստումներ, մասնավորապես՝ Նա կպահի նրանց փորձության ժամանակ (Մեծ նեղությունը) և որ շուտով կգա (Հայտ. 3:10-11): Ոչ մի այլ նամակում չունենք Տիրոջ գալու վերաբերյալ նման հստակ հայտարարություն:

Լավոդիկե նշանակում է «արդար կամ կրոնասեր մարդիկ» կամ «մարդկանց իրավունքներ»: Լավոդիկյան եկեղեցին ներկայացնում է Ֆիլադելֆիայի եկեղեցուց հեռանալը: Առաքյալների ուսմունքը անտեսվում է, հետևում են աշխարհի մարդկանց ու աշխարհի համակարգին: «Լսիր, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին» դարձել է «լսի՛ր եկեղեցուն»: Մարդիկ դարձել են ամբարտավան ու ինքնավստահ և այլևս կարիք չունեն Տիրոջը, ով դուրսը կանգնած թակում է նրանց սրտի դուռը (Հայտ. 3:17-20):

Լավոդիկեի եկեղեցին միակ եկեղեցին է, ում գովասանքի խոսք ուղղված չէ: Նրանք Տիրոջ վկաները լինե-լու առանձնաշնորհումը կորցնելու եզրին էին: Նա պատրաստվում էր վերցնելու նրանց ճրագակալը՝ ասելով. «Ես քեզ դուրս պիտի փսխեմ իմ բերանից» (Հայտ. 3:16): Եվ դեռ Իր անսահման շնորհքով ու ողորմածությամբ Նա աղերսում է նրանց լսել Իր ձայնը ու բացել դուռը: Նրանք պետք է արթնանան և ապաշխարեն: Նրա խոսքերը նրանց (և այսօր շատերին) սա է. «Ահա ես կանգնել եմ դռան մոտ ու թակում եմ, եթե մեկն իմ ձայնը լսի և բացի դուռը, կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ, և նա էլ՝ Ինձ հետ» (Հայտ. 3:20):

4. Յոթ նամակները՝ որպես քրիստոնեական ուսմունք (2:1 - 3:22)

Այժմ յոթ նամակները կդիտարկենք քրիստոնեական ուսմունքի տեսանկյունից և ապա կփորձենք կիրառել դրանք մեր սրտում ու կյանքում:

Բացառությամբ երեք նամակների՝ մնացած նամակներում կա հիմ-

նական կառուցվածք՝ ներածություն, գովասանքի խոսք, դժգոհություն, հորդոր ու հաղթողին խոստում: Մենք կուսումնասիրենք սրանցից յուրաքանչյուրը յուրաքանչյուր նամակ դիտարկելիս:

4.1 Եփեսոսի եկեղեցին (2:1-7)

Ներածություն. Տեր Հիսուսը յոթ եկեղեցիների պատասխանատուներին պահում է Իր աջ ձեռքում ու շրջում յոթ եկեղեցիների մեջ:

Գովասանքի խոսք. Նա մանրամասնորեն գիտի, թե նրանք ինչ են անում և ինչպես են պայքարում եկեղեցու ներսում գտնվող չարիքի դեմ:

Դժգոհություն. նրանք թողեցին իրենց առաջին սերը:

Հորդոր. նրանք պետք է ապաշխարեն ու վերադառնան իրենց առաջին գործերին: Եթե այդպես չանեն, ապա այլևս Տիրոջ համար վկայություն տալու առանձնաշնորհում չեն ունենա, Տերը կվերացնի նրանց աշտանակը: Նրանք պետք է լսեն, թե ինչ է ասում Հոգին եկեղեցիներին:

Խոստում հաղթողին. յուրաքանչյուր ճշմարիտ ու հավատարիմ քրիստոնյա իրավունք կունենա Կյանքի ծառից ուտելու, որը գտնվում է Աստծո դրախտում:

4.2 Զմյուռնիայի եկեղեցին (2:8-11)

Ներածություն. Տեր Հիսուսը ներկայացվում է որպես Առաջինն ու Վերջինը, որը մահացավ ու հարություն առավ:

Գովասանքի խոսք. Նա գիտեր, որ նրանք տառապում են չարչարանքի և աղքատության մեջ, բայց հարուստ են: Նա գիտեր, որ նրանք անարդարացի են մեղադրվում, և որ նրանց տառապանքը կշատանա, կբանտարկվեն, կհալածվեն ու կմահանան:

Դժգոհություն. դժգոհություն չկա:

Հորդոր. նրանք չպետք է վախենան. նրանց տառապանքը կավարտվի: Հավատարիմները կստանան կյանքի պսակը: Նրանք պետք է լսեն, թե ինչ է ասում Հոգին եկեղեցիներին:

Խոստում հաղթողին. յուրաքանչյուր ճշմարիտ ու հավատարիմ քրիստոնյայի համար խոստում կա, որ նրան երկրորդ մահը չի վնասելու:

Ապաշխարություն

«Եվ թե ինչպես ոչ մի օգտակար բան ետ չպահեցի՝ և՛ հրապարակավ, և՛ թե տան մեջ ձեզ սովորեցնելով, հրեաներին, ինչպես և հույներին վկայություն տվեցի՝ Աստծո առաջ ապաշխարել և մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ» (Գործք 20:20-21):

Պողոսը հաճախ մի քանի բառով ամփոփում է մեծ ու կարևոր ճըշմարտություններ: Դրա օրինակն է Եփեսոսի երեցներին ուղղած իր հրաժեշտի խոսքը:

Պողոսի առաքելական պատգամի առաջին մասը «Աստծո առաջ ապաշխարել» արտահայտությունն է, իսկ երկրորդը՝ «մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ»-ը: Բավականին պարզ է, բայց և այնպես՝ հիանալի ու խորիմաստ:

Դարեր շարունակ քրիստոնեական պատգամը այս ու այն կողմ է քաշված, երբեմն խիստ չափազանցված, երբեմն գրեթե աշխարհին մոտ: Որոշ երկրներում քրիստոնեական մշակույթ է ձևավորված, և ամբողջ բնակչությունը դիտարկվում է որպես քրիստոնյա ժողովուրդ, բայց, այդուհանդերձ, ճշմարիտ ու հավատարիմ հավատացյալները դաժանորեն հալածվում են: Այսօր մեզ մատուցում են «բարգավաճման Ավետարան» գաղափարախոսությունը, որտեղ Աստված դիտարկվում է որպես օգտակար գործիք՝ հարստության և հարմարավետության հասնելու համար: Ոմանք փորձում են քրիստոնյային հատուկ հոգևոր «շապիկ» հագնել և Ավետարանի պատգամը փոխանցել առանց որևէ մեկին նեղացնելու կամ արդի աշխարհիկ մտածելակերպը ու ներկայիս մշակութային նորաձևությունը հանդիմանելու:

Բայց եկեղեցիներում շատ մարդիկ պարզապես չգիտեն, թե ինչ է Ավետարանը: Նրանք Աստվածաշնչի մասին որոշ գիտելիքներ ունեն, ծանոթ են այնտեղ նկարագրված իրադարձություններին, բայց ինձ թվում է՝ նրանցից շատերը հեռու են աստվածաշնչային կյանքից: Չնայած ասում են, թե հավատում են Աստծո Խոսքին, սակայն

իրենց կյանքում ոչ մի փոփոխություն, զգացում կամ նախանձախնդրություն չունեն: Իրենց համար Աստվածաշնչի համաձայն կյանք ապրելը մեծ նշանակություն չունի:

Պողոսի պատգամը սկսվում է ապաշխարության կոչով. այն շատ ավելին է, քան փոքրիկ աղոթք կարդալը, որը սկսվում է հետևյալ խոսքով. «Սիրելի՛ Աստված, ես գիտեմ, որ մեղավոր եմ...»: Ապաշխարել նշանակում է դարձի գալ, շրջվել մեղքից ու քայլել դեպի Փրկիչը: Մենք գուցե դարձի գալու պահին ամբողջությամբ չենք հասկացել ապաշխարության իմաստն ու ծավալը, սակայն ապաշխարությունը այդքանով չի ավարտվում: Այն սկսվում է ու շարունակվում մեր մնացած կյանքի ընթացքում:

Ապաշխարությունը ափսոսանք կամ հիասթափություն չէ, թե իբր մենք ավելի լավը չենք, քան հույս ունեինք, որ կլինենք, կամ կարծում էինք, թե կանք: Ապաշխարել նշանակում է գիտակցել և ընդունել սեփական հպարտ բնությունը և Աստծո դեմ կանխամտածված ապստամբությունը, որն արտացոլվում է մեր գործած մեղքերով, այնուհետև գիտակցել, որ մեղք ենք գործում, քանի որ մեղավոր ենք, և որ Աստծուց մեր բաժանումը ոչ միայն մեր արածի, այլև մեր ով լինելու պատճառով է: Սա ցավալի, բայց անհրաժեշտ գիտակցում է: Ապաշխարությամբ մենք ոչ միայն հրաժարվում ենք մեր կատարած չար գործերից, այլև այն ամենից, ինչը, ըստ էության, մեր մեջ է:

Սա կարող է բավական ծայրահեղական թվալ, բայց Տեր Հիսուսը հենց սրա համար մահացավ: Նա Իր կյանքը տվեց մեր մեղքերի պատճառով, բայց ոչ միայն մեր մեղքերի համար: Աստծո շնորհքով և ներգործությամբ մենք միավորված ենք Քրիստոսի հետ Նրա մահվամբ և հարությամբ, որպեսզի կարողանանք սովորել «կյանքի նորոգության» մեջ քայլել (Հռոմ. 6:3-4): Սա կատարյալ և ամբողջական փրկություն է:

Ճշմարիտ ապաշխարություն չունեցողը սրտով ու մտքով կապված չէ Տիրոջ հետ: Նրանց հավատքը, եթե կարելի է այդպես կոչել, ոչ այլ ինչ է, քան զբաղմունք կամ ինչ-որ ընկերային ներգրավվածություն: Նրանք Տեր Հիսուսի աշակերտները չեն և, ցավոք սրտի, ամենևին էլ քրիստոնյա չեն:

Պողոսի պատգամն է. «Աստծո առաջ ապաշխարել և մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ»: Տեր Հիսուսին հավատալով կատարյալ ներում և հավիտենական կյանք ենք գտնում: Այս կյանքում մենք պետք է շարունակենք ապաշխարել և հավատալ մինչև այն օրը, երբ դեմ առ դեմ հանդիպենք Նրան, ով մեզ մեծ ու անսահման սիրով սիրեց:

Նեյլ Բուգման

Մեղքի մեջ բռնված

Հովհաննես 8:1-12

Կրոնական առաջնորդներն ուզում էին ծուղակի մեջ գցել Հիսուսին, որ Նա որևէ բան ասի, որպեսզի կարողանային մեղադրանք ներկայացնել Նրա դեմ: Նրանք հարցեր էին տալիս Հիսուսի իշխանության, Նրա ազդարարությունների, Շաբաթի և այլնի մասին: Այս անգամ նրանք ուզում էին Հիսուսի և Մովսեսի միջև հակասություն գտնել: Մովսեսն ասել էր.

«Եվ ով որ մի ուրիշ մարդու կնոջ հետ շնություն անի, իր դրացու կնոջ հետ շնություն անողը անպատճառ պետք է մեռցվի. շնացող մարդն էլ, շնացյալ կինն էլ» (Ղևտ. 20:10):

Կրոնական առաջնորդները պոռնկության մեղքի մեջ բռնված մի կին բերեցին և նրան մարդկանց առջև կանգնեցրին, հավանաբար Հիսուսի դիմաց: Դա ակնհայտորեն Հիսուսին ծուղակը գցելու ծրագիր էր: Կրոնական առաջնորդներն ուզում էին Հիսուսի և Մովսեսի օրենքի միջև հակասություն գտնել, որպեսզի ժողովուրդը հակառակվի Հիսուսին: Նրանք հիշեցրին Մովսեսի այն պատվիրանը, ըստ որի՝ անառակներին պետք է քարկոծել. արդյո՞ք Հիսուսը համաձայն էր այդ պատժին:

Ուսումնասիրելով այս դեպքը՝ մենք տեսնում ենք, որ այդ կինն իսկապես մեղավոր էր և չէր պնդում հակառակը. Հիսուսը ոչ էլ նրան մեղադրողներին մեղադրեց ստախոսության մեջ:

Ի՞նչ արեց Հիսուսը: Հովհ. 8:6-ն ասում է. «Բայց այս բանն ասում էին նրան փորձելով, որ չարախոսեն նրանից: Հիսուսն էլ դեպի ցած թեքվելով՝ գրում էր հողի վրա»: Աստվածաշունչը չի ասում, թե ինչ գրեց Հիսուսը. հավանաբար Նա Ղևտացիներ 20:10-ի պատվիրանն էր գրել, որպեսզի հիշեցներ, որ երկու մեղավոր կողմերին էլ պետք է քարկոծեին, ոչ թե միայն մեկ կողմին: (Այդ կնոջ հետ անառակություն գործած տղամարդուն Հիսուսի մոտ չէին բերել):

Ինչ էլ որ գրած լիներ Հիսուսը, առաջնորդները դժգոհ էին Նրա լռությունից և պատասխան էին ակնկալում: Հիսուսն անմեղ մեղադրող փնտրեց ու չգտավ: Նա մարդկանց ասում էր, որ օրենքը պետք է կատարվի, բայց անմեղ մարդկանց կողմից:

Այդպիսով՝ Հիսուսը քար չնետեց Մովսեսի օրենքի վրա: Նա չարդարացրեց այդ կնոջ մեղքը և չասաց, որ նա արժանի չէ պատժի, բայց մեղադրեց մյուս բոլոր մեղավորներին: Ուրիշներին դատողները պետք է լիովին մաքուր լինեն: Սա չի նշանակում, որ մենք կարող ենք հանգիստ մեղք գործել, որովհետև բոլորն էլ մեղք են գործում: Մենք մեղավոր ենք, եթե նույնիսկ մեզ մեղքի մեջ չեն բռնել:

Երկրորդ անգամ, երբ Հիսուսն սկսեց հողի վրա գրել, մեղադրողները հեռացան՝ գիտակցելով իրենց մեղքերը: Երբ Հիսուսը մատնացույց արեց այդ կնոջը, ոչ ոք չհամարձակվեց նրան դատապարտել: Հետո այդ կինը լսեց Հիսուսի սփոփիչ խոսքերը, որոնք լի էին շնորհով ու ճշմարտությամբ:

«Եվ Հիսուսն ասաց նրան. «Ես էլ չեմ քեզ դատապարտում, գնա՛ և այլևս մեղք մի՛ գործիր»» (Հովհ. 8:11):

Հիսուսը նրա մեղքին հավանություն չտվեց, բայց ներեց նրան: Եթե դու էլ այդ մեղադրողների կամ մեղավորների նման ես, Հիսուսի՛ն մոտեցիր, Նա կների քեզ՝ անկախ նրանից, թե ինչ ես արել:

Վեր. Հովսեփ Հովսեփյան

❊ ❊ ❊

Փորձությունները մեր կյանքում

Հակոբոս 1

Ներ հասարակության մեջ ընդունված առասպել կա. երկարակեցությունը անխուսափելիորեն մեզ դարձնում է բարի, իմաստուն ու հասուն: Երկար տարիներ քրիստոնյա լինելը մեզ հասուն քրիստոնյա է դարձնում: Իսկ ի՞նչ է ձեր կարծիքը, արդյոք այս պնդումները ճի՞շտ են: Հակոբոսն իր այս նամակը գրեց մի խումբ մարդկանց, ովքեր որոշ ժամանակ քրիստոնյա էին, բայց դեռ հասուն չէին:

Հասունության առաջին նշաններից մեկն այն է, թե ինչպես ենք գնահատում մեր կյանքում տեղի ունեցած բաները, հատկապես այն իրադարձությունները, որոնք ինչ-որ տեսակի ցավ են պատճառում: Սա հատկապես վերաբերում է այն քրիստոնյաներին, որոնց Հակոբոսը գրում էր, քանի որ նրանք իրենց մաշկի վրա սկսել էին զգալ հռոմեական Ներոն, Վեսպասիանոս և Դոմիտիանոս կայսրերի օրոք հալածանքների սարսափը: Բայց մենք բռնի հալածանքներ կրելու կարիք չունենք, որպեսզի հասկանանք Հակոբոսի խոսքերը:

«Երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք» (հմր 2): Մենք նույնպես ընդգրկված ենք այստեղ: «Երբ» բառն օգտագործելով՝ Հակոբոսը կարծես թե ուզում է ասել, որ փորձություններ ակնկալենք: Նա չի ասում. «Եթե փորձություններ դիմագրավող այն դժբախտ խմբում եք...»: Ո՛չ: Նրա ասածը ավելի շատ նման է հետևյալին. «Երբ փորձվելու ձեր հերթը գա...»: Մեզ համար դժվար է այս փաստն ընդունելը: Այն մեզանից հոգևոր հասունություն է պահանջում: Կան մարդիկ, ովքեր հույս ունեն, որ կկարողանան կյանքն ապրել առանց լուրջ փորձությունների դիմագրավելու: Նրանք կարծում են, թե Աստծուն հնազանդվելը և ճիշտ բաներ անելը իրենց զերծ կպահի այս իրականությունից:

Հետաքրքիր է տեսնել մարդկանց արձագանքը, երբ ընտանիքը ճգնաժամի միջով է անցնում: Գուցե զավակները ապստամբել են Աստծո դեմ, կամ հիվանդություն, կամ կորուստ է եղել տան մեջ: Որքա՞ն հաճախ ենք լսում «Ո՞րն էր իմ սխալը» հարցը: Արդյոք գի-

տե՞ք, թե ինչ է թաքնված այդ հարցի տակ: Այնտեղ թաքնված է այն միտքը, որ եթե ճիշտ կյանքով ապրեք, ապա ոչ մի սխալ չի պատահի: Եթե գտնենք սխալի պատճառը, ապա պատճառից խուսափելը կկանխի այն, որպեսզի կրկին չպատահի:

Շատ վատ բաներ են պատահում շատ լավ մարդկանց հետ: Հոբի գիրքը գրված է սա ցույց տալու համար: Հոբը լավ մարդ էր, բայց իր կյանքում ամեն բան սխալ ընթացավ: Հասուն լինել նշանակում է գիտակցել, որ անկատար մարդիկ ենք, որոնք ապրում են անկատար աշխարհում, ուստի չպետք է շատ զարմանանք, երբ ամեն ինչ սկսի սխալ ընթանալ: Այս իրողության հանդեպ ճիշտ կեցվածք ունենալը կարեկից է դարձնում ձեզ այն մարդկանց հանդեպ, ովքեր փորձությունների միջով են անցնում: Նրանց մեղադրելու պատճառներ մի՛ փնտրեք: Այն նաև պատրաստում է ձեզ սեփական փորձությունների ժամանակ պատրաստ գտնվելուն: Փորձությունները չեն պատահում միայն մի խումբ դժբախտ մարդկանց, ովքեր բավակա-նին ճկուն չեն կյանքի դժվարությունները դիմագրավելու մեջ: Երբ ամեն ինչ սկսում է սխալ ընթանալ, ուրեմն բնական է: Այս ամենը հասկանալը հասունության նշան է:

Փորձությունները բոլորիս են պատահում: Տառապանքը ավելին է, քան պարզապես լուծման ենթակա մի խնդիր: Մեզանից շատերի համար փորձություններն ու տառապանքները նման են կոշիկում հայտնված քարի:

Ի՞նչ եք անում այդ ժամանակ: Ինչպես որևէ խնդիր, դուք լուծում եք այն:

Դուք կանգ եք առնում, ձեր կոշիկից հանում եք այդ քարը, ապա շարունակում ճամփան: Սա է այն ձևը, որով փորձում ենք դիտարկել մեր փորձություններն ու դժվարությունները: Կա՛մ լուծում եք այն ու շարունակում կյանքը, կա՛մ՝ ոչ: Տառապելու ժամանակ մենք ուզում ենք լուծել հարցը. սա ճիշտ է և պետք է փորձենք այդպես անել: Մեր առաջին հարցը միշտ հետևյալն է. «Ինչպե՞ս կարող եմ լուծել այս խնդիրը կամ խուսափել այս ցավից»: Նույնիսկ Քրիստոսը այդ խնդրեց Գեթսեմանիում: Բայց ոչ բոլոր խնդիրներն են լուծելի: Հասուն մարդը գիտակցում է սա:

Աստված ուզում է՝ շատ ավելի լավ հարցի մասին խորհրդածենք. «Ինչպե՞ս կարող է այս փորձությունը մեզ ավելի մոտեցնել Աստծուն»: Փորձության ընթացքում այս հարցը տալով՝ դուք սկսում եք նկատելի քայլեր կատարել դեպի հասունություն: Առանց այս հեռանկարի՝ 2-րդ և 3-րդ համարները շատ տարօրինակ են թվում, այնպես չէ՞: «Այդ բոլորը ուրախություն համարեցե՛ք, երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք»: Ուրախությո՞ւն: Երբ դաշտում հովիվները լսեցին, թե ինչպես էին հրեշտակները երգում Քրիստոսի ծնունդը, նրանք ուրախացան: Ես սա կարող եմ հասկանալ: Բայց Հակոբոսի գրածը տարօրինակ է թվում: Արդյո՞ք նկատի ունեք, որ պետք է այդպիսի ուրախություն ունենամ, երբ տառապանքի մեջ եմ հայտնվում: Տարօրինակ է, բայց այդ է խորհուրդ տալիս մեզ Հակոբոսը: Ինչպե՞ս կարելի է ուրախություն ունենալ դժվար իրավիճակներում: Քանի որ մենք գիտենք, որ «հավատի փորձությունը համբերություն է առաջացնում: Սակայն համբերությունը թող կատարյալ արդյունք ունենա, որպեսզի կատարյալ և ամբողջական լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք» (հմր 3-4): Դուք ավելի հասուն կդառնաք, ավելի շատ քրիստոսանման: Տառապանքը պարզապես խնդիր չէ, որը պետք է լուծենք: Այն ավելին է: Այն Աստծո ձեռքով նախատեսված ծրագիր է՝ մեզ վերափոխելու համար:

Այն, ինչի մասին խոսեցինք, տառապանքի աստվածաբանությունն է:

Այն տառապանքի բացատրությունն է: Սա հովվական խորհրդատվություն չէ նրանց համար, ովքեր տառապանքի մեջ են: Հսկայական տարբերություն կա:

Եթե հիվանդ մարդու խեղճ ընտանիքին այցելեք և նրանց խոր ցավի մեջ ասեք. «Դուք պետք է ուրախանաք, այս փորձությունը ձեզ ավելի լավ մարդ կդարձնի», ապա հավանաբար նրանք կցանկանան հարվածել ձեզ, և դուք արժանի եք դրան: Ցավի մեջ եղող մարդկանց աստվածաբանություն մի՛ սովորեցրեք: Ի՞նչ է սովորեցնում անել Աստվածաշունչը, երբ տեսնում եք մեկին, ով լաց ու ցավ ունի: Նրանց հետ լացե՛ք (Հռոմ. 12:15): Մի՛ ասեք, թե այդ պահին ինչպես պետք է զգան, այլ սիրով կարեկցություն հայտնեք:

Ի՞նչ պետք է անի փորձության մեջ գտնվող քրիստոնյան: Հակոբոսն ասում է, որ մեզ իմաստություն է պետք: Իմաստությունը դժվար ժամանակներին փոխարինողը չէ: Այդ այն է, ինչ Աստված տալիս է մեզ դժվար ժամանակներում:

«Երանելի է այն մարդը, որ դիմանում է փորձություններին. քանի որ եթե փորձվելուց հետո ընտիր համարվի, ստանալու է կենաց պսակը...» (հմր 12): Օրհնված ու երջանիկ է, հոգևորապես բարեկեցիկ ու նախանձելի է այն մարդը, ով հարատևում է ու ստանում կյանքի պսակը: Այս համարը սովորեցնում է մեզ Աստծո ճոխ ու անսահման առատաձեռնության մասին: Աստվածաշունչն ասում է, թե հավիտենական կյանքը ձրի պարգև է: Երբ ստացանք կյանքի այդ պարգևը և ապրեցինք դրանով, ապա մեզ տրվեց կյանքի պսակը: Աստված մեզ պարգև է տալու և այնուհետև վարձատրելու է այն բանի համար, թե ինչպես ստացանք այն:

Փորձություններն անիմաստ ու ապարդյուն չեն: Մեր կյանքի պատմությունը, նույնիսկ եթե այն տխուր ու ցավոտ է, իսկապես Աստծո շատ ավելի մեծ պատմության ենթապատկերն է, որն ունի երջանիկ ավարտ և հաճախ դժվար է տեսնել մեր արցունքների միջով: Հակոբոսն ասում է, թե մենք գիտենք, որ հոգևորապես հասունանալու ճանապարհին ենք, նույնիսկ եթե այդ փառքի ճառագայթներից միայն մի քանիսն ենք տեսնում մեր կյանքի սովորական իրադարձություններում, քանի որ Աստված մեզ դեպի փառք է տանում:

Ռեքս Տիրլավ

«[8]Թող ամբողջ երկիրը վախենա՛ ՏԻՐՈՋԻՑ,
ու Նրանից ակնածեն աշխարհի բոլոր բնակիչները:
[9]Քանի որ Նա խոսեց ու կատարվեց: Նա հրամայեց, ու հաստատվեց:
[10]ՏԵՐԸ ոչնչի է հանգեցնում հեթանոսների խորհուրդը,
ի չիք դարձնում ժողովուրդների ծրագրերը:
[11]ՏԻՐՈՋ խորհուրդը հավիտյան հաստատ է,
ու Նրա սրտի խոհերը՝ ազգից մինչև ազգ»:

(Սաղմոս 33:8-11)

Բարի անունը

«Բարի անունը ավելի լավ է, քան թանկարժեք հոտավետ յուղը» (Ժող. 7:1):

Ժողովողի գրքում Աստված մեզ ցույց է տալիս ամբողջ աշխարհի ունայնությունը: Նրա փափագն է, որ մենք դարձի գանք: Ինչ որ Նա անում է, ուղղված է դեպի հավիտենականություն, և մարդկությունը չի կարող փոխել Նրա որոշումները: Գրքի հեղինակը հաճախ օգտագործում է «արևի տակ» և «ամեն ինչ ունայն է» արտահայտությունները:

Աստված մեր մասին ունի կատարյալ գիտություն: Նա հետևում է մեր մտքերին և ծրագրերին, գործերին և անգործությանը: Նա ստեղծել է մեզ այնպես, որ տեսանելի և նյութական պարագաները տպավորություն են թողնում մեզ վրա: Սակայն պետք է գիտակցենք, որ նյութականը և երկրայինը անցողիկ են: Ավելի խելամիտ կլիներ մտածել այն մասին, ինչն արևից այնկողմ է, այսինքն՝ Երկնքում, այն հավիտենականը, որ պատրաստել է Աստված մարդու փրկության և բարօրության համար:

Հնագույն ժամանակներում հանրաճանաչ մարդիկ կարող էին իրենց թույլ տալ օգտվել թանկարժեք օծանելիքներից: Անուշահոտությունը հանդիսանում էր այսպես կոչված վեհության նշան: Սակայն եթե հեղինակությունը կոտրված էր, նույնիսկ ամենալավ անուշահոտ յուղը չէր կարող թաքցնել դա. այն չէր կարող փոխարինել բարի անվանը:

Իսկ ի՞նչ կարգավիճակ ունի անունը հավիտենականության լույսի ներքո: Աստված վերջնականապես կդատի մեզ, և միայն Նրա որոշումը նշանակություն կունենա:

Ուրեմն՝ եկե՛ք ձգտենք բարի անուն ձեռք բերելու Աստծո առաջ: Տեր Հիսուս Քրիստոսն Իր աշակերտներին ասել է. «Ուրախացե՛ք, որ ձեր անունները գրված են երկնքում» (Ղուկ. 10:20): Այսպիսի գրանցում արժե՛ ունենալ:

Մեղա Քեզ, Տե՛ր

1. Մեղա Քեզ, Տե՛ր, կյանքի՛ իշխան,
Որ կյանքն իզուր ես վատնեցի,
Շատ ճամփաներ, գործեր ինչքան,
Քեզ վաղորոք չհայտնեցի։

2. Մեղա Քեզ, Տե՛ր ու Թագավո՛ր,
Աստծուն թողած՝ մարդն ընտրեցի,
Որպես չարի պատգամավոր՝
Կյանքը թողած՝ մահն ընտրեցի։

3. Մեղա Քեզ, Տե՛ր, աշխարհի՛ լույս,
Մութ սիրելու ու մթագնած մտքիս համար,
Գողգոթայի լանջին, Հիսո՛ւս,
Չարչարանքիդ, խաչիդ համար։

4. Մեղա Քեզ, Տե՛ր, սո՛ւրբ Դատավոր,
Դատարաններում ճառեցի,
Եվ երբ վիճակս էր ահավոր,
Նվաստացա, կաշառեցի։

5. Մեղա Քեզ, Տե՛ր, ճշմարի՛տ Վեմ,
Տունս ավազին շինեցի։
Օգուտն ի՞նչ, որ Խոսքդ գիտեմ,
Երբ նոր հիմքեր ես հիմնեցի։

6. Մեղա Քեզ, Տե՛ր, իմ Արարի՛չ,

Որ արգելվածը սիրեցի:
Ո՞ւր ես Ադամ, հարցից այնինչ,
Զգաստացա, խոր նիրհեցի:

7. Մեղա Քեզ, Տե՛ր, Բժի՛շկ հզոր,
Որ իմ ցավերն այլոց տարա,
Վազվզեցի գիշեր ու զօր,
Էլ ավելի վատթարացա:

8. Մեղա Քեզ, Տե՛ր, իմ գառնարա՛ծ,
Հոտից փախա, խոտորվեցի,
Վարձկաններին ապավինած՝
Ժայռից ընկա, կոտորվեցի:

9. Մեղա Քեզ, Տե՛ր, Դո՛ւռ փրկության,
Որ սուտ դռներ ես թակեցի,
Որ սովորս ստրկության,
Կանչիդ ականջս փակեցի:

10. Մեղա Քեզ, Տե՛ր, սիրո՛ղ իմ Հայր,
Որ ունեցվածքդ կիսեցի,
Որ ընտրեցի հարմար մի վայր,
Պոռնիկների հետ մսխեցի:

11. Մեղա Քեզ, Տե՛ր, սո՛ւրբ Այգեպան,
Որ թզենին եմ անպտուղ,
Այսքան տարի եղար պաշտպան,
Որ չի օգնում ո՛չ աղբ, ո՛չ ջուր:

12. Մեղա Քեզ, Տե՛ր, Ճշմարտությո՛ւն,
Իսկական կյա՛նք ու ճանապա՛րհ,
Իսկ ես համակ նամարդություն,
Մեռած հոգով անապաշխար։

13. Մեղա Քեզ, Տե՛ր, հազար մեղա,
Որ գթառատ մարդասերիդ,
Երախտապարտ երբեք չեղա,
Որ չանսացի սուրբ խոսքերիդ։

14. Եվ այս մեղան էլ, որ ասում
Ու կրկնում եմ ամեն տան մեջ,
Դարձյալ մտքիս է հակասում,
Կեղծ բառեր կան տողերի մեջ։

15. Ուրեմն՝ ես մեկ ճար ունեմ.
Մոռանալով գործերն ամեն՝
Ողորմությանդ ապավինեմ,
Փառքդ հավիտյան է, ամեն։

Գառնիկ Աբրեյան